

6012

Բիրք և թաղապետն 5
Կիւշակառիկ Հայուսութեան
կու. Կուտայսի մարզուհու

5)


3/кн/148983)

15-93

Ա. ՄՈԱՎԵԱՆ

ՎԻԵԼՆՈՐԻԿ
Ա. Ի. ՏԻՏՈՒԹ
ՎՈԼՏԻՋԵԴԵՆԻ
Ակադեմիա Խոր
С. С. Р.

ՅԵՐՔ ՅԵՎ ԻՆՉՊԵՇ Ե ՀԻՄՆԱԴՐՎԵԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲԱՑԼԸ.)
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



Գեղական Հրատարակություն. — Եկեղան — 1928

1 DEC 2009
25 AUG 2005

21738

ЗКП1(47.925)

Г-93

Ա. ՄԻԱՎՅԱՆ

ЗКП1(47.925) 59301-660

Г-93 Հրատապություն
Հայոց և բյուզունի ժ
Կրթության հ. Կ. 6-րդ շաբաթ

17	անգլ	
17	8/186	28/ապ/30
14	3822	28/ապ/81
17	18269	28/հ/81

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԱ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՔԻՄԱՂՐՎԵԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲԱՅԼԸ)
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



104. 07. 2013



Հ. № 895. Գրառեպիվար № 1498 (բ) Տերած 2000
Գետհատի առաջին տպարան Վաղարշապատում
Պատովիր № 285



S9901-66

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս բրոցուրն արտատպություն է «Խորհրդային Հայաստան» թերթի 1923 թ. մայիսի 30-ի և հունիսի 1-ի համարներում (№№—114 և 116) տպված նույն վերնագիրը կրող մեր հոդվածի:

Մեր կուսակցության շարքերում, կրօմիերիտական-ների և անկուսակցական բանվորների մեջ մինչև այժմ ձիշտ պատկերացում չկա Հայաստանի կոմ. (Բայլշ.) կուսակցության հիմնադրման մասին։ Սա խոշոր բաց է, վորը կարծում ենք, վորոց չափով պետք ել լրացնե այս բրոցուրը։ Բրոցը գրված է գլխավորապես անձնական հիշողությունների հիմամբ։ Մեր հիշողությունները կարելի չեն ամրապնդել դոկումենտներով, թերթերից կամ անտիպ արձանագրություններից բերված ցիտատներով, լիթե նրանք հարկավոր չափով մնացած լինելին։

Բայց ժամանակը չի սպասում։ Կոմունիստ և կոմիերիտական նոր սերունդն ուզում է իմանալ իր կուսակցության պատմությունը։

Ահա ինչու կարեոր եր տպագրության հանձնել 1923 թ. մայիսին գրված այս հոդվածը։

Պահպանելով հոդվածի հիմնական միտքը, տեքստի մեջ արված են կարճ լրացումներ, պարզաբանումներ և խմբագրական ուղղումներ։

Ա. Մ.

1 սեպտեմբերի, 1928 թ.
Յ ե ր ե ա ն

ՅԵՐԵ և ինչպես ե հիմնադրվել Հայաստանի Կո-
մունիստական (Բայլշ.) Կուսակցությունը:

Այս հարցի իսկական պատասխանը գիտեն միայն
սակավաթիվ ընկերները Շատերը կարծում են, թե
մեր կուսակցության պատմությունն սկսվում է Հա-
յաստանի Նոյեմբերյան հեղափոխությունից (29 նո-
յեմբ. 1920 թ.). Դա թյուրիմացություն ե: Թյուրիմա-
ցություն ե և այն կարծիքը, իրը մեր ներկա Հ.Կ.
(թ)կ. նույն այն «Հայաստանի Կոմ. Կուսակցություն»
կոչվող կազմակերպությունն ե, վորը Թիֆլիսում և
Մոսկվայում 1918—19 տարիներին յերեաց հրա-
պարակի, վրա և ապա ընկալ պատմության գիրկը,
չթողներով կազմակերպչական վոչ մի ժառանգ:

Կա մի յերրորդ թյուրիմացություն ևս, վոմանք
մեր կուսակցության տոհմագրությունն սկսում են
1918 թ. և 19-ի սկզբներում Յերեանում աշխատող
բայց նիկների մի խմբակից, վորը մեկ-մեկ հանդես եր
գալիս «Հայաստանի կուսակցություն» անունով:

Այս թյուրիմացությունները պիտի ցըել և վորո-
շակի պարզել Հ. Կոմ. (թ.) Կուսակց. հիմնադրման ժա-
մանակը և պայմանները:

Վերը հիշած առաջին թյուրիմացությունը, այն,
վոր իրը միայն 1920 թ. Նոյեմբերյան հեղափոխու-
թյունից հետո Հայաստանում առաջացավ և ձևավոր-

վեց «Հայաստանի կոմունիստական (Բայլշ.)» կուսակցությունը սխալ և և չունի փաստական վոչ մի հիմունք: Նոյեմբերյան հեղաշրջումից ամիսներ առաջթե Յերեանում և թե Ալեքսանդրապոլում, այլ և մյուս վայրերում (Ղարաքիլսա, Դիլիջան, Նոր-Բայազետ և այլն) գոյություն ունեցին կոմունիստական կազմակերպություններ, վոր գործում ելին «Հայաստանի կոմունիստական (Բայլշ.) կուսակցություն» անունով: Գոյություն ուներ կուսակցության կենտրոնական կոմիտե և նրա Բյուրոն, վորը գտնվում եր նախ Թիֆլիսում, ապա Բագվում. (այդ մասին ավելի մանրամասն ներքեւ): Ստամբուլ մեր կուսակցության սկիզբը Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխության հետ կապելը կատարյալ թյուրիմացություն եւ:

Կատարյալ և, կավելացնելի, վասակար թյուրիմացություն պիտի համարել և այն կարծիքը, իրը մեր կուսակցությունը վերը հիշված «Հ. Կոմ. կուսակցություն» կոչված խմբակից և սկիզբ առել և հանդիսանում և նրա ժառանգը:

Սկզբից ասենք, վոր մեր կուսակցության և «Կուսակցություն» կոչվող այդ խմբակի անվան մեջ կամի «փոքր», բայց նշանակալից տարբերություն: Մեր կուսակցությունը կոչվում և «Հայաստանի կոմունիստական (Բայլշեվիկենքի) կուսակցություն», այն ինչ առաջինը կոչվում եր սոսկ «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»: Հենց այս փաստն ինքնին մատնանշում ե այն, վոր մեր կուսակցությունն իր գաղափարական և կազմակերպչական արմատներով դրված և նույն հողի վրա, վորի վրա գտնվում են վրաստանի, Աղբբեջանի և Խորհրդային Միության

մյուս հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները, վորոնք բոլորը մտնում են Համամիութենական կոմունիստական (Բայլշ.) կուսակցության մեջ և կազմում նրա տեղական, հանրապետական կազմակերպությունը: Եյս կարեոր հանգամանքը մատնանշելով, դառնանք ինչդրի փաստական կողմին:

«Հայաստանի կոմունիստական կուսակցություն» կոչված խմբակի պատմությունն սկսվում է 1917 թ. աշունքից: Թիֆլիսում աշխատող մի քանի թրքահայրացիկներ՝ ը. ը. Գր. Վարդանյան, Վահան Յերեմյան, Գուրգեն Հայկունի, Գառնիկ Կարագյուլյան, վոչ թրքահայր Հայկ Հովսեփյանը և մի քանի ուրիշները (սրանց մեջ կային նաև պատահական մարդիկ՝ հնչակյան, կիսահնչակյան գունավորումով) միտք են հղանում կազմակերպել հատուկ թրքահայր բայլշեկյան կուսակցուաշխատեր բացառապես թրքահայրի մեջ և թրքահայրուն, վորը պիտի յաստանում. (այդ ժամանակ Թյուրքիաի մի քանի վիլայեթներ գտնվում ելին ուսւական խմբերի ամսականության գորքերի ձեռքին և դեռ կենդանի լիր Թյուրքիաի արևելյան այդ վիլայեթների բաժանման ունրանցից հայկական սկետական տերրիտորիա ստեղծելու դաշնակցական մտանությունը): Թրքահայր բայլշեկյաների այդ խմբակը պարբարի մոտակա նպատակ ուներ տապալել Դաշնակցության հեկմոնիան արեմանակ աշխատավորների գլխից և նրանց կապել Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխության և Խորհրդապետության հետ: Եյս մտքով հատուկ նամակ և կազմվում Ռուսաստանի Բայլշեկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի անունով և հատուկ պատգամավորի (ընկ. Գ. Հայկունի) միջոցով ուղարկ-

վում Պետրովրադ: Կենտրոնական Կոմիտեն համաշերանքով և վերաբերվում թրքահայերի մեջ աշխատելիք այդ կուսակցության հիմնադրման առաջարկին և խոստանում իր աջակցությունը:

Թիֆլիսի ղեղավար բարձրական գործադրությունը կողմից նույնպես առանձին առարկություն չկար այդ խմբակի գործունելության դեմ, յեթե միայն նա դուրս չկար իր առաջ զծած գործունելության վորոշ սահմաններից: 1918 թ. հունվար - փետրվար ամիսներից սկսվում ե այդ խմբակի հրապարակալին գործունելությունը: Հիմնվում է «Կարմիր գրուշակ» թերթը և մեծ աղմուկով աշխատանք սկսվում: Միքանի գեղարատիվ հոգվածներ տալով թերթում իրեն նպատակների մասին, «Հայաստանի կոմ. Կուսակցության» կենտրոնական Կոմիտեն կարողանում է Փրակցիս կազմի Արեմտահայերի Թիֆլիսի Խորհրդում և մի քիչ խառնում ե այնտեղ նստած և մնածամանություն կազմող գաշնակցականների արյունը: Բայց որպագակաս մանուկ եր Թրքահայերի «Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը»: Հենց այդ հունվար - փետրվար - մարտ ամիսներին ոռուսական բանակը քաշվում և Թրքահայաստանից, իր յետից բերելով գաղթականության բազմահազար մասսա: Դաշնակցության դեմ Թիֆլիսում պայքար սկսած «Հ. Կոմ. Կուսակցությունը» Թիֆլիսից դուրս Թրքահայեկան շրջաններում լուրջ փորձեր չեն անում աշխատանք սկսելու, իսկ հայ գաղթականների ամենամեծ մասսաները կուտակված ենին Յերևանի և Ալեքսանդրապոլի գալառներում: Այստեղ, Թիֆլիսում, գործունելության մեծ հող չունենալով և վոչ ել վորոշ նպատակադրութիւն, հայկունականներն սկսում են խառնվել

տեղական հեղափոխական — քաղաքական կյանքին և այսպիսով ստեղծում աշխատանքի ղեկավարման մի լիրկորդ կենտրոնի Փիկցիա, Ռուսաստանի Սոց-դեմ. Բանվ. կուսակց. (բայց կերպին իր) Կովկասի Յերկրային Կոմիտեի կողքին: Այդ տեսդես նետեանք եր մի դեպք, Հիշում եմ, մի կարեռը քաղաքական մոմենտի «Հայ. Կոմ. Կուսակցի կենար. Կոմիտեի ներկայացուցիչները (ընկ. Գ. Կարագյուլյան և մի վոմն Վարպետ) իրենց կենտրոնի անունից առաջարկում են Կովկ. Յերկր. Կոմիտեին կողմել խառը բյուրո սկսող շարժումները զեկավարելու համար Յերկրային Կոմիտեն կը բարենորեն մերժում ե այս առաջարկը և պահանջում այդ խմբակից ներկայացնել իր ծրագիրը և կանոնագրությունը Յերկրային Կոմիտեն վճռականորմն պահանջում ե նաև այդ խմբակից, վոր նա զագարի գուտ տեղական քաղաքական խնդիրներով պարագելուց և մանավանդ չխառնվի հեղափոխական — ուղարկան բնույթ ունեցող ձեռնարկների: Իր դրած հարցերի պատասխանը Յերկրային Կոմիտեն, սակայն, չի ստանում:

Հայկունականներն ելի մեկ-լիրկու ամիս աղմկելով Թիֆլիսում, բայց առանց զրական հեղափոխական բովանդակության, մայիսի (1918) վերջերին ցրում են իրենց փոքրաթիվ կազմակերպությունը, հեռանում Թիֆլիսից չլում դեպի Հյուսիսային Կովկաս: Մի տարի հետո, այն և 1919-ի գարնանն այդ խմբակի մի քանի ներկայացուցիչները, (Գ. Հայկունի, Յերկրային և այլն) նորից լիրկում են քաղաքական հրապարակում, այս անգամ Մոսկվայում և վերականգնելով իրենց խըմբակի հին անունը — («Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն») աշխատանք ևն սկսում Մոսկվայում

և զրակտն - հրատարակչական նպատակներով իրենց շուրջը հավաքում մի խումբ մտավորականները։ Այդ թվի աշնանն Անդրկովկաս են գալիս «Հայ-նի Կոմունիստական Կուսակցության» մի քանի ներկայացուցիչներ և փորձեր անում (Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում) աշխատանք սկսելու իրենց «Կուսակցության» Փիրմալի աակ: Բայց այդ չի հաջողվում: Տեղական Կոմունիստական կազմակերպությունները, վոր այդ ժամանակ դեռ աշխատում ելին Ռուսաստանի Կուսակցության Փիրմալի տակ, արգելում են, խանգարում «Հայ-նի կ կ.» աշխատանքի վերականգնմանը: Մոռկվալից լեկած ընկերները վերջի վերջո իրենց գրոշակն իջնենքով մանում են մեր կուսակցության շարքերը։

Զենք հիշում, վոր այնուհետեւ վորեկ փորձ արգած լինի այդ կուսակցության ընստավրացիալի համար: Այսպիսով 1919—20 թ. ձմեռը քաղաքական հրապարակից բոլորովին չքանում ե թրբահայ կոմունիստների այդ կազմակերպությունը, չթողնելով կազմակերպչական—քաղաքական վորեկ ժառանգ: Քաղաքական ասպարեզ լենելով իրեկ «Հայաստանի» (թրբահայ) կուսակցություն, բայց իրականում լինելով Թիֆլիսի մի խումբ ինտելիգենցների խմբակ, Հայ, կ. կ. շատ արագորեն գլուխում ե «սպեցիֆիզմի», սպեցիֆիկյան մտայնության գիրկը և փաստորեն փորձում վերականգնելու կրկնել «լերջանկահիշաաակ» իշխանյանների ձգուումը՝ «Հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչ» կազմակերպությունը լինելու։

Այդ մասսակար թուրիմացության կամ անմահանալու տեսչի արտահայտություն և «Большая Со-

ветская Энциклопедия»-ի I հատորում տպված (եջ 758—759) ը, Հայկունու մանրամասն և ուռեցված կենսագրականը (թե՞ ինքնակենսագրականը), ուր առանց վերապահության Հայաստ Կոմ. Կուս. ակտիվ հիմնողիրներից մեկն ե հայտարարվում ը. Հայկունին։

Յերրորդ թիուրիմացությունն ե հանդիսանում այն կարծիքը, իրը մեր կուսակցության տոհմագրությունն սկսվում ե 1918—19 թ. սկզբներից, իերը Յերեանում աշխատում եր բայլշեկիլան մի խմբակ, վորը մեկ-մեկ հանդես եր գալիս «Հայաստանի կուսակցություն» անունով։

Զենք ժխտում, վոր 1918 թ. Հայաստանի գժոխալին պայմաններում, Յերեանի մի քանի ընկերներ քաջություն են ունեցել կրելու բայլշեկիկ անունը և իրենց շուրջը հավաքել մի շարք լերիտասարդների, դաստիարակելով նրանց Հոկտեմբերյան հեղափոխության և բայլշեկիլան կուսակցության վոզով։ Յերեանում այդ ընկերները ձեակերպվել են իրեկ տեղական կազմակերպություն, վորը և հայտարարնել ե, թե «մինչև ընդհանուրը համագումարը հանրապետության սահմաններում հանդիսանալու լի կուսակցության գերագույն որգանը, վորին պետք ե զիմել բոլոր հարկավոր պարագաներին, կուսակցական ամեն տեսակ գործերով և խնդիրներով»։ (տես Յերեանի «Խոսք» թերթի 1918 թ., սոյեմբերի 20-ի №-6): Հետագա ամիսների ընթացքում Յերեանի Կոմ. կազմակերպությունը, վոչինչ, համարյա վոչինչ, չի արել գավառական կազմակերպությունների հետ կապվելու համար. Աշտարակ, Նոր-Բայազետ, Դիլիջան, Իջևան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ, Կարս, Կաղզվան և այլ տեղեր կալին կոմունիստ ընկերներ և

րջիջներ, վորոնք կարոտ ելին կենտրոնի ղեկավարման։
Բայց Յերևանի կազմակերպությունն որդեկախիվ, այլ և
յեռանդի պահասության պատճառով, չի կատվում տե-
ղական ընկերների հետ։ Յերևանուն նույնարես կազմա-
կերպության զարկերակը շատ գանգաղ էր խփում, մեծ
ընդմիջումներով։ Ավելի մեծ յեռանդ և աշխատունակու-
թյուն ցուցադրում և կոմունիստական Յերիտասարդու-
թյան «Սպարտակ» Միությունը, վորոն իր ճյուղերն
ուներ գավառներում։

Այսպիսով, քիչ հիմք կա Յերևանի 1918 թ. և
1919 թ. առաջին կիսամյակի բարլշեիլիքան կազմակեր-
պությանը հավաքով, կենտրոնացնող ուժ համարելու
Հայաստանի մյուս վայրերի կոմունիստների և նրանց
րջիջների նկատմամբ։

Հայաստանի կոմունիստական ուժերի հավաքման
ու միացման աշխատանքը ռեալ կերպով սկսվել է
միայն 1919 թ. ամառը, իսկ այդ աշխատանքի նախա-
ձեռնությունը պատկանում է Ռուսաստան։ Կոմ. Կո-
մակցության կովկասի Յերկրային կոմիտեին, վորոն
այդ ժամանակ անկեղալ վիճակում եր։ Այդ կոմիտեի
անդամ—Ներկայացուցիչը՝ 1919 թ. հունիսին զայխ և
Հայաստան և մեկ ամսի ընթացքում պատելով համարյա-
սածող հանրապետությունը կապ հաստատում տեղա-
կան կոմունիստական բոլոր ուժերի հետ։ Այդ ընկե-
րոջ մասնակցությամբ և ղեկավարությամբ հավաքվում,
ձևակերպվում են կոմրջիջներ և կազմակերպություններ
հետեւալ տեղերում։ Ալեքսանդրապոլ, Յերևան, Աշուա-
ռակ, Նոր Բայրզմեր, Դիլիջան, Խջեն, Դարբաքիլիսա:

Նույն 1919 թ. սեպտեմբերին հաջողվում է Յերե-
պահնում հրավիրել տեղական այդ րջիջների և կազմա-

կերպությունների ներկայացուցիչների հանրապետա-
կան առաջին խորհրդակցությունը։ Խորհրդակցությունն
զրադշում և մի շարք կազմակերպչական խնդիրներով
և ընտրում հանրապետական ղեկավար մարմին։ Այս
խորհրդակցությանը մասնակցում են, ի միջի այլոց, նոր
Հայաստան յեկած ընկերներ՝ Ս. Կասյան, Ս. Խանոյան,
Դ. Շահվերդյան, այլ և հներից՝ Հովս. Պողոսյանը, Ստ.
Ալլավերդյանը, Արշավիր Մելքոնյանը, Ղուկաս Ղուկաս-
յանը, Ս. Մռավյանը և մի քանի ուրիշ ընկերներ։

Անեկալ աշխատանքի պայմաններում (այն ել
Հայաստանի գեր շատ անփորձ կազմակերպություն-
ների մեջ) հաճախ պատահող թյուրիմացությամբ սեպ-
տեմբերյան այդ խորհրդակցությանը դժբախտաբար
ներկա չելին Ալեքսանդրապոլի, Աշտարակի և Նոր-
Բայազետի կազմակերպությունների ներկայացուցիչ-
ները։ Տեղերը լրիվ ներկայացված չլինելու պատճառով՝
գումարված խորհրդակցությունն իրեն չի հայտա-
րաբում կոնֆերենցիա։ Սակայն և այնպես, այս Խոր-
հրդակցությամբ հիմք և զրգում աշխատանքի՝ Հայաս-
տանի մասշտաբով և ձևավորվում հանրապետական
կիստրուն։ Աշխատանքի ղեկավարման համար ընտրվում
է հատուկ մարմին, վոր և զիմում և յեռանդուն աշխա-
տանքի (հարկավ, անկեղալ կերպով) և մինչև հունվար
հաջողվում ե բավական լայնացնել տեղական կազմա-
կերպությունների շարքերը։ Մասնավորապես Յերևա-
նում և մասնավանդ Ալեքսանդրապոլում կոմրջիջների
թիվն աշխանալին ամխաների ընթացքում յեռապատկ-
վում, քառապատկվում և և աշխատանքն սկսում և
ստանալ մասսայական բնուլիթ։ Կազ և հաստատվում
պրոֆմիությունների հետ և աշխատանք ծավալվում։

Կապ հաստատվում են նաև Ալեքպոլի ու Արագածոտնի (Աշտարակ—Կարբի) գյուղացիական միությունների հետո Առանձին հաջողություն ե ունենում աշխատանքը Լենինականի լերկաթուղարքին զեպույտմ, ուր աշխատում են Բագվից լեկած մի քանի ընկերներ: 1920 թ. հունվարի սկզբներին մեռած մենչեւիկ-ինտերնացիոնալիստ Արշակ Զուրաբյանի թաղմանը Յերևանի կազմակերպությունը քաղաքական լելույթ ե ունենում. նա մասնակցում է Զուրաբյանի թաղման պրոցեսին հատուկ դրոշակով՝ վորի շուրջը համախմբված ելին հարցուրից ավելի բանվորներ և ինտելիգենտ ընկերներ: Հուղարկավորության ընթացքում քաղաքական ճաներով դուրս են գալիս ընկ. ընկ. Ստ. Ալլավերդյանը և Ա. Մուալիմը: Յերևանի Կոմ. կազմակերպության ուժերի փորձնական մի գորատես եր այդ ցուցը և նա ունեցավ հաջողություն: Նույնպես հաջող լելույթ պիտի համարել դաշնակցական Արտ. Զիլինկարյանի, Բ. Իշխանյանի և մեր ընկերների մի դիսկուսիան, վոր կայացավ 1920 թ. հունվ. սկզբներին Զիլինկարյանի զեկուցման առթիվ Խորհրդացին Ռուսաստանի դրության մասին: Իր ուժերի նույնպիսի զորատես կազմակերպում են նաև Ալեքպոլի կազմակերպությունը և ունենում նույնպիսի, լեթե վոչ ավելի, հաջողություն (Զուրաբյանի մահվան առթիվ):

Մինչ 1920 թ. հունվարը կառարված կուռաշխատանքները պետք ե համարել նախապատրաստական լրջանի աշխատանքներ, ինը կազմակերպությունները ձևավորվում ելին, ամրանում և դիմում արդեն մասսայական աշխատանքի:

Հունվարի կիսին կայանում ե Հայաստանի բոլոր

կազմակերպությունների լիազոր կոնֆերենցիա, վորին ներկա կիխն համարյա բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները. բացակայում եր Զանգեզուրի կազմակերպության ներկայացուցիչը. (Զանգեզուրի հետ կապ հաստատվել եր 1919 թ. զեկտեմբերին): Հունվարյան կոնֆերենցիան ամփոփում ե անցած աշխատանքների արդյունքները և գծում հետագա աշխատանքների ուղիները և նպատակադրությունները: Կոնֆերենցիան ընտրում ենոր զեկավար մարմին՝ Հայաստանի Կոմիտեն, վորը կոչված եր աշխատելու քաղաքական նոր պայմաններում, ինը արդեն Կարմիր բանակը մոտեցել եր Անդրկովկասի սահմաններին ու այստեղ կատարվող հեղափոխական աշխատանքների պերսպեկտիվները լայնացել ելին, քաղաքական-հեղափոխական նպատակադրությունները գառնում ելին ավելի ակտուալ, մարտական մասսաների տրամադրությունը բարձրանում: Այստեղ անհրաժեշտ ե նորից արձանագրել այն փաստը, վոր առանց ընդհանումի, մինչև 1920 թ. մայիսի վերջերն Անդրկովկասի Բայլշկիկան կազմակերպությունները կրում ելին Ռուսաստանի Ս.-Դ. Բանվորական (Բայլշ.) Կուսակց. և ապա Ռուսաստանի Կոմունիստական (Բայլշ.) Կուսակցության ֆիբրմաթեպետ և... թեպետ և կամոքն մենշևիկների, մուսաֆաթականների և դաշնակցականների Անդրկովկասը 1917-18 թ. թ. ձմեռվա ամիսներից սկսած արհեստականորեն բաժանված եր բանվորա-գյուղացիական Ռուսաստանից: Մենք, Անդրկովկասի Բայլշկիկներս, ցանկություն չունեինք հետեւելու ազգայնական հականեղափոխականների որինակին և մեր գաղափարական-կազմակերպչական կազմ հաստատ ելինք պահում Ռուսաստանի բայլշկիկան Կուսակցության հետ: 1920

թ. մարտին (թե քիչ առաջ) կովկասի Յերկրային կոմիտեի անմիջական ղեկավարությամբ և համաձայնությամբ Ազգրեջանում ձևակերպվում եւ «Ազգրեջանի Կոմունիստական (Բալլշ.) Կուսակցությունը»։ Դա քաղաքական-կազմակերպչական նկատառությունից կատարած մի քայլ եր, վորի մոտակա շարժառիթներից մեկն ել այն եր, վոր «Հումանիթ» Ս.-Գ. կազմակերպության ձախ թեր ձգտում եր մտնելու մեր շարքերը և անհրաժեշտ եր հանրապետական մասշտարով ձևակերպել նոր կազմակերպությունը։ Այդ անհրաժեշտությունն ել առվելի համոզիչ ե գառնում, եթե հիշենք, վոր Կարմիր բանակն արդեն մոտեցել եր Ազրբեջանի սահմաններին և Բագվի հերոսական պրոլետարիատը պատրաստում եր ապստամբության։

Յեզ ահա ապրիլի 28-ին (1920 թ.) տապարվում ե Մուսաֆաթի կառավարությունը և Ազգրեջանում հաստատվում Խորհրդային իշխանություն։ Բագվի հեղափոխական շունչը հասնում ե Հայաստան և Վրաստան, ուր մայիսեկայն ցուցերն ստանում են խորշը քաղաքական լեռութների բնութիւն Հայաստանում մայիսեկայն ցուցերին հետեւում են մայիսան ապրատամբության անմոռանալի որերը։ Վրաստանում որեցոր բարձրանում եր հեղափոխական տրամադրությունը։ Վրաստանի մենշեկլյան կառավարությունը շտապով ներկայացուցիչ ե ուղարկում Մոսկվա, ուր և մայիսի 8-ին կնքում է պայմանագիր, վորով Խորհրդային իշխանությունը ճանաչում է Վրաստանի անկախությունը։ Եռևնպիսի պայմանագիր կնքելու բանկցություններ ե սկսում (խոկական նայիրյան արագությամբ) նաև դաշնակցական կառավարությունը։ Մայիսի

սի 8-ին պայմանագրի համաձայն՝ Վրաստանի կոմունիստական՝ կազմակերպություններն ստանում են լեզուալության իրավունքը Թիֆլիսի և Վրաստանի մլուս վայրերի բանտերի դռները բացվում են, հարյուրավոր ընկերներ ստանում են ազատություն։ Կովկասի Յերկրային կոմիտեն տեղերից լեկած ընկերների հետ միասին մայիսի վերջերին կայացնում ե հատուկ խորհըրդակցություն (վորին տրվում ե կոնֆերենցիալի իրավունքներ), ստեղծված գրությունը քննելու և մեր հետագա տակա տակա կան վորոշելու համար։ Այդ խորհըրդակցությանը մասնակցում են թե Վրաստանի և թե Հայաստանի ընկերները։

Այս կարևոր խորհըրդակցությունը, այլ վորոշումների թվում, ընդունում և նաև վորոշում Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների սահմաններում գործող կոմունիստական կազմակերպությունները ձեռվակերպել իրեւ առանձին հանրապետական կուսակցություններ։

Քաղաքական պայմանները փոխվել են և նոր սիստեմացիան թելազրում եր կուսակցական-կազմակերպչական ալլ նոր կառուցվածքը։

Մյապիսով պաշտոնական կյանքի լեն կանչվում Վրաստանի և Հայաստանի կոմունիստական (Բալլշ.) կուսակցությունները, վորոնք սակայն Անդրկովկասի մասշտաբով պահպանում են զեկավարության մի կենտրոն՝ հանձինս կովկասի Յերկրային կոմիտեի։

Կովկասի Յերկրային կոմիտեի վրացի անդամների խումբը ձևակերպվում ե իրեւ Վրաստ. Կոմ. Կուսակցության և ենտրոնական կոմիտեն նույն ձեռվ Յերկրության հայ անդամները (Ս. Ա. Առաքան, Ա. Բեկ-



զադյան, Ա. Մուավյան) կազմում են Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Արտասահմանի Բյուրո: Այս Բյուրոյի կազմի մեջ շուտով մտցրվում են նաև ը. Դ. Շահվերդյանը և ը. Հով. Պողոսյանը, իսկ կենտ. Կոմ-ի մեջ, բացի Յերկրածին կոմիտեի յերեք անդամնից, մտցրվում ե Յերևանի բանուում և գուրսը գտնվող Հայաստանի կոմիտեի ամբողջ կազմը:

Թիֆլիսում գտնվող Արտասահմանյան Բյուրոյի աշխատանքը շարունակվում է յերեք ամիս, վորի ընթացքում նա կապ է հաստատում և պահպանում Հայաստանի կազմակերպությունների հետ, վորոնք գըտնվում ենին շատ ծանր պայմաններում: Հաջողվում է միքանի աշխատողներ և միջոցներ որկեր: Մենշևիլյան կառավարության ձեռքով, սակայն, Արտասահմանի Բյուրոյի անդամները, մեկը մյոււի հետեւից, ձերբակալվում են և աքսորվում Վրաստանի սահմաններից:

Աշխատանքի ավելի հարմար տեղ եր Խորհրդային Ազգային 1920 թ. ամառը Բագվում կենտկոմի անդամներից ձեռվորվում է նոր Արտասահմանի Բյուրո (Յագնորօր), վորի մեջ մտնում եին ը. ը. Հայկակ Կոստանյան, Դր. Սիմոնյան, Ավիս և Բագու յեկած միքանի այլ ընկերներ:

1920 թ. սեպտեմբ. սկզբներին Բագվում հավաքված Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցում են Հայաստանից (գլխավորապես Լոռուց) յեկած մի ամբողջ խումբ ընկերներ, վորոնց ներկայությունից ոգտվելով հաջողվում է գումարել կուսակցական կոնֆերենցիա: Բագվում աշխատող Արտասահմանի Բյուրոն հաջողում է կազմակերպել հրատարակ-

չություն, կուսակցական դպրոց, իր ղեկավարությունական կոմիտեի իջևանի և Շամշադինի ապատամբ գլուղացիներից կազմված զորամասերը, կապ է հաստատում Հայաստանում գաղտնի աշխատանքներ կատարող և բանտերում նատած ընկերների հետ: Հայաստանի կոմիտեի կենտկոմը վերջնականապես ձեւվորվում է 1920 թ. Նոյեմբերյան հեղափոխության նախորդակին: Բագուհավաքված ընկերներից կազմված այդ կենտկոմի ղեկավարությամբ ե կատարվում Նոյեմբերյան հեղաշրջան հավաքված կամաց աշխատանքները:

Այս է համառոտակի փաստական պատմությունը Հայաստանի կոմունիստական (Բայլշեկիների) կուսակցամարդան ժամանակի և պայմանների, այլ ցության հիմնադրման ժամանակի և պայմանների, այլ և նրա կենտրոնի առաջին ամիսների աշխատանքների մասին:

Թյուրիմացության տեղիք չտալու համար այսակեղ պետք է հիշել մի հանգամանք ևս:

1905 թ. հեղափոխության նախընթաց տարիներին, նրա ընթացքում և նրանից հետո Հայաստանի միքանի վայրերում (Յերևան, Ալեքսանդրոպոլի Բայազետ, Լոռի, Ալլավերդի և այլն) գոյություն ունեին Սոցիալ-Դեմոկրատական (Բայլշեկիների) կազմակերպություններ, վորոնք վորուշ քաղաքական-հեղափոխական աշխատանք կատարել են: Սակայն Հայաստանի կոմկուսի հիմնադրումը համարելով 1920 թ., մենք վարդում ենք ձիւտ աշնակես, ինչպես գրաստանի, Ազգային աշխատանքի, Բելորուսսիայի և այլն կոմունիստները, Ռւբայանացի, Բելորուսսիայի և այլն կոմունիստները, վորոնց տերթիստորիայի վրա նույնպես յեղել և գործել 19

Այս կոմիտեի կազմ
պահպան է.

Դափոխության դարաշրջանում, բայց Նրանք իրենց
կոմիտեի պաշտոնական ձևակերպումը համարում են Հոկ-
տեմբերիան հեղափոխության տաօնամյակում։ Միայն
այս շրջանում ե, վոր պաշտոնապես ձևավորվում էն իրեն հանրապետական կազմակերպություններ, Ուկրայ-
նալի, Բելոռուսիալի, Ազրբյանի, Վրաստանի, Հայաս-
տանի և այլ կոմ. (Բայլշ.) կուսակցությունները։ Բոլոր
այդ կուսակցությունները լինելով կազմակերպչորեն
հանրապետական միավորներ՝ մտնում են։ Համամիու-
թյուն ական կոմ. կուսակցության մեջ, ունին մեկ
ընդհանուր ծրագիր ու կանոնադրություն և կոմինտեր-
նի մեջ են մտնում իրեն մեկ կուսակցություն։

Վերն արգած ամբողջ պատմությունից պարզվում
է, վոր Հայաստանի մի շարք վայրերի բայլշեիկուան
կազմակերպություններն, իրեն այդպիսին, վերջնակա-
նապես ձևավորվում են 1919 թ. ամառային և աշնա-
նալին ամիսներին, մասսայական-հեղափոխական աշ-
խատանքի անցնում ձմեռը և մասնավանդ գարնանը,
Ազրբյանի խորհրդալին հեղաշրջումից հետո։ 1919 թ.
աշնան և 1920 թ. ձմեռային և գարնանալին աշխա-
տանքի ժամանակ Հայաստանի կազմակերպություններն
ունիին իրենց փաստական կենտրոնը, հանձինս Հա-
յաստանի կոմիտեին։ Խոկ նույն 20 թ. մայիսի վերջե-
րին Հայաստանի կոմ. (Բայլշ.) կուսակցությունը (Նրա
հետ նաև Վրաստանի կոմիտեը) իր պաշտոնական
ձևավորումն և ստանում Թիֆլիսի կուսակցական խոր-
հրդակցության մեջ։



ՀՀ Ազգային գրադարան



